


3907

Գալանդարաներ.

Որտեղից աշխարհ եկավ
քո եղբայր



ԹԻՖԼԻՍ
1926

478
14 JUL 2009

«ՀԱՍԿԵՐ»-Ի ՄԱՆԿԵԼԱՐԺԵԿԱՆ ԳՐԱԳԼՐԱՆ

VI

ԿԱՐԼ ԳԱԼԱՆԴԱՌԷՐ

«ՌՏԵՂԻՑ ԱՇԽԱՐՀ ԵԿԱԻ

ՔՈ ԵՂԱՅՐԸ»)))

Թարգմ. ա. ԹՈՓԶԵԱՆԻ



151.7
9-16

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Հիթմէս» Մաղաթեան փողոց № 5.

1906

(225)

12.03.2013

3907

17037

151.7
9-16
4.



1740-54

Մարդը բնութեան ամենագարգացած արարածն է: Կենդանին նույնպէս ունի հասկացողութիւն և խելացիութիւն: Բայց բանականութիւնը և տրամաբանութիւնը միայն մարդու սեփականութիւնն են կազմում:

Միայն մարդն է ընդունակ նախամտածած, գործողութիւններ և ինքնակամ օրէնքներ ստեղծելու, օրէնքներ, որոնք մի կողմից՝ հիմնւած են բնութեան անխորտակելի ուժերի վրա, իսկ միւս կողմից՝ ձգտում են բնութեան այդ անխորտակելի ուժերը յաղթահարել:

Վերջինս արդէն անմտութիւն է, այնպէս չէ: Սակայն չը նայելով դրան՝ իրողութիւնն այդ է:

Հասարակական կարգերի նպատակն այն է, որ մարդկային բարոյական սովորութիւններն ու սկզբունքները այնպէս ամրացնեն, որպէսզի նրանք կեանքի պայմանները դառնան, ինչպէս օրինակ՝ շինարարութիւնը, մարմնի խնամատարութիւնը, հոգու խնամատարութիւնը, այսինքն այնպէս, որ բարոյական սովորութիւնն և սքկզբունքը դառնան մարդու բնութեան յատկանիշը, որով նա տարբերոււմ է սոսկ ինքնապաշտպանութեան զգացմունքով առաջնորդուող կենդանիներից:

Արդեօք նրանք տարբերոււմ են միմեանցից հողի ունենալով կամ չունենալով: Ո՛չ: Թէ մարդը և թէ կենդանին հողի ունենալով Բայց նրանք տարբերոււմ են զգա-

ցնդութեան աստիճանով: Եւ մարդկանց ասեղծած օրէնքների նպատակն է մարդկային հոգին առողջ, կենսութեան և նրա զգացութեան վիճակի մէջ պահել: Նրանք մարդու «գործողութեան ու կամքի» վրա այլ կերպ են ազդում, քան կենդանիներին «գործողութեան ու կամքի» վրա, որովհետեւ միեւնոյն երկոյթաներից մարդկային հոգին զբոսում է տարբեր կերպով քան թէ կենդանու հոգին:

Մարդը մրսում է, և նրա մերձաւորը կարեկցաբար նրան պաշտպանում է իր ցնցոտիներով: Մէկը քաղցած է, և նրա մերձաւորը նրան տալիս է իր գերանի վերջին կտորը: Շունը քաղցած է, և նրա մօտից միւսը անցնում է անկարեկից: Նա քաղցած է, և ոչ մի գութ չի գտնում կուշտ կենդանու կողմից, նոյնիսկ այն ժամանակ, երբ վերջինիս այդ բոլորն ունի կերակուր են տալիս: Մի կենդանի ինչքան էլ կուշտ լինի, չի հրաժարւի կրկին ուտելուց, և նոյնիսկ իր քաղցած ընկերով բերանից կըխլի նրա պատառը:

Եւ որովհետեւ մարդկային զգացմունքները աւելի նուրբ են, քան կենդանիներինը, ուստի՝ մարդու և կենդանու գործողութիւնն ու կամքը միեւնոյն չափով չի կարելի չափել:

Քանի որ մարդն էլ իր բնոյթով ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի զարգացած կենդանի, ուստի՝ գոյութիւն ունեն մարդկային որոշ օրէնքներ, որոնք մարդկութեանը պատկերներ են տալիս, միշտ ի նկատի ունենալով նրա նուրբ զգացողութիւնը:

Մինչև օրս իշխող այդ տեսակ ամենահին օրէնք-

ների կարգին են պատկանում հին կտակարանի «տասը պատւիրանները», որոնք միեւնոյն ժամանակ քաղաքացիական օրէնագրքի հիմքն են կազմում:

Ուրեմն՝ դրանք ոչ միայն հասարակական հոգացողութեան արդիւնքն են կազմում, այլ և դործադրում են բոլոր քաղաքակիրթ երկիրների պետական օրէնագրութեան կողմից: Բարոյական սովորութիւնների և ուսմունքի այդպիսի սիւներն են կազմում բարեպաշտութեան վերաբերեալ պատւիրանը, անարգար սեփականութեան, մարդասպանութեան ու վերջապէս և հարեանի կնոջ վրա աչք ունենալու արգելումը, և այլն և այլն, այսինքն՝ այն պատւիրաններն ու արգելումները, որոնք քաղաքակրթութեան աստիճանի համեմատ և հասարակական ոչ ոչ յարաբերութիւններին համապատասխան՝ ստորաբաժանւում են այս կամ այն մասնաբաժանութիւնների:

Այդ ստորաբաժանումներէց մէկը այն սովորութիւնն է, որով մասամբ ծածկում են սեռական յարաբերութիւններին հետ որեւէ կապ ունեցող երկոյթները: Տարբեր սեռերի պատկանող չափահասներին թոյլատրելի չէ ծննդաբերութեան մասին խօսել, նշանւած օրիորդն ու երիտասարդը չեն կարող փոխադարձաբար հարց ու փորձ անել միմեանց առողջութեան մասին, որպէսզի դրանից եզրակացնեն, թէ որքան յարմար պայմաններ կան ծննդաբերութեան համար: Դպրոցական մանուկներին ու պատանիներին էլ չէ պարզաբանւում, թէ ինչից է ծագում երեխան: Ընդհակառակը՝ այն ամենը, ինչ որ վերաբերում է մարդու իսկական ծագմանը, ոչ

միայն քաղարկւում է, այլ և ծանր մեղքի ու ամօթանքի զգւելի վարագուրով է ծածկւում:

Սեռական երևոյթների այդպիսի հասկացողութիւնը հազարաւոր տարիներից իվեր գոյութիւն ունի:

Իսկապէս զարմանալի երկար ժամանակ:

Նոյնպէս է եղել նաև կնոջ վիճակը հասարակական կեանքում: Հազարաւոր տարիներ շարունակ կնոջ դրութիւնը թէ պաշտօնէութան, թէ արդիւնաբերութան կեանքում, կարճատև ժամանակաշրջանների ու ազգութիւնների չնչին բացառութեամբ, գտնւել է ամենաստոր աստիճանի վրա և միայն նորագոյն ժամանակներս սկսել է բարձրանալ:

Պէտք է էր արգեօք այդ անընդհատ բարենորոգչական հոսանքը չազդի նաև սեռական յարաբերութիւնների հասկացողութեան վրա, այսինքն՝ չը տարածի լոյս կամ աւելի ճիշտն ասած՝ պարզաբանութիւն այդ հասկացողութեան վերաբերմամբ: Ինչո՞ւ ոչ:

Միթէ այդպիսի ազդեցութեանը արգելք պիտի լինի այն հանգամանքը, որ լուսաւորութեան, պարզութեան ու մարդկայնութեան աշխարհը փակւած է անհասկացողութեան ու վայրենութեան փականքներով: Երբէք:

Այս պինդ փականքներն ու պատնէշները շատ անգամ արգելում են սակաւաթիւ գործիչների ճանապարհը դէպի իրենց գաղափարական ձգտումներն ու նպատակը: Բայց կան դրանք, գործիչները, որոնք ճշմարտութեան անյաղթելի գէնքով զինւած և քայլ առ քայլ աւելացնելով համոզւած գաղափարակիրների թիւն ու

ուժեղ աջակցութիւնը՝ անընդհատ աշխատում են ուժգին թափով յաղթահարել անհիմն կեղծաւորութեան փտած և օրէցօր աւելի ու աւելի քայքայւող արգելքները:

Եւ պէտք է վերջ ի վերջոյ ջախջախեն պատնէշները:

Այս բարձր ձգտման տէր քաջարի մարտիկը կարող է համարւել «Մայրերին հովանաւորող միութիւնը» Գերմանիայում, որի նպատակը միայն մայրերին պաշտպանելը չէ, այլ ամբողջ սեռական կեանքը դէպի ճշմարիտ, մաքուր բնականութեան ճանապարհն ուղղելն է:

Ամենից առաջ պէտք է սկսել նրանից, թէ ինչպէս է աշխարհ գալիս երեխան: Սովորաբար փոքրահասակներին այդ հարցը բացատրելու համար ասում են, որ արագիւն է բարուրած երեխային բերում: Բայց անհրաժեշտ է վերջ տալ այդպիսի կեղծ ամօթխածութեանը և սնոտիապաշտ բացատրութիւններին և դրա փոխարէն դնել մարդկային սեռերի յարաբերութեան բացատրութիւնը, որպէս մարդու ծագման աղբիւրը, իր բոլոր հետեանքներով ու երևոյթներով, իր ամբողջ մաքրութեամբ ու սրբութեամբ:

Սա մի ծանրակշիռ խնդիր է, որի լուծումը դժուարեցնում է ի թիւս այլոց նաև «Մայրերին հովանաւորող միութեանը»: Այս միութիւնն ունի իր շարքերում այնպիսի նշանաւոր տեսական մասնագէտ, որպիսին է դօկտօր Մաքս Մարկուզէ, որ արծարծում է մատաղ սերնդին սեռական յարաբերութիւնների հարցը բացատրելու անհրաժեշտութիւնը, և Մարիա Լիշնեվսկա-

յաի նման գործնական մանկավարժ, որ ձգտում է իրականացնել այդ նպատակը:

Եւ հարցի բնոյթն էլ այնպէս է, որ բժիշկը իր հարուստ փորձառութեան շնորհիւ ամենապատշաճաւոր անձն է սեռական յարաբերութիւնների բացատրութեան անհրաժեշտութիւնն ընդունել տալու համար, այն ինչ մանկավարժական կոչումը միակն է, որ ստեղծւած է այդ նպատակն իրականացնելու միջոցներն ու ճանապարհը ցոյց տալու համար:

Ամեն մի խելահաս և մտածող մարդու համար, որ բնութեան երևոյթների մէջ ոչինչ չէ գտնում անթոյլատրելի կամ կեղտոտ, անշուշտ պարզ է մանուկների այդ ձևի կրթութեան անհրաժեշտութիւնը: Այո, պարզ է, որովհետեւ ճշմարտութեան ուսմունքը ազնււացնում է մանկական սրտերը և բարոյական նախապաշարմունքներն ու բնական երևոյթների սխալ ու վատ հասկացողութիւնները ոչնչացնում: Դա միևնոյն ժամանակ թոյլ չէ տալիս ստորացնելու կնոջ ամենասուբր ու ազնիւ կոչումը—մայրութիւնը:

Մանկական հասկացողութիւնից մարդու ծագման էութիւնը ծածկելը մի մեղսալից ինքնախաբէութիւն է: Այո, ինքնախաբէութիւնը դեռ փոքրագոյն չարիք է, որ ունի իր դառն հետեանքները, որովհետեւ, երբ միայն ինքնախաբէութիւն է, այսինքն՝ երբ երեխան, չընայելով գաղտնապահութեան, ճշմարտութիւնն իմանում է, դա արդէն զարգացնում է նրա մէջ միայն աւթի զգացմունքը այն բանի վերաբերմամբ, որ բնութիւնը իր արարածների վզին անհրաժեշտօրէն փաթա-

թել է: Բայց երբ երեխայի համար բնութեան ուժերը անհասկանալի են մնում, երբ բնական ամեն մի երեւոյթի մէջ մանուկներին ստիպում էք տեսնել մի որևէ ամօթալի կամ մեղսալից բան, այդպիսով դուք վտանգաւոր թոյն էք կաթեցնում նրանց անբիծ հոգումէջ, որովհետեւ նրանք արդէն իւրաքանչիւր երևոյթի մէջ, որ մի որևէ կապ ունի սեռական գործունէութիւնների հետ, կը տեսնեն միայն ամօթաբեր և մեղսալից կողմեր: Եւ քանի որ հարցի բնական կողմը մանուկների դիտողութիւնից ծածկւում է և նրանց ուշադրութիւնից հեռու մնում, ուստի նրանց համար մի առանձին գրաւիչ բան է դառնում սեռական յանցագործութիւնը:

Արդէն երեխայական ամենամատաղ հասակից ծընողներն ամենախիստ և անօգուտ մեթոդով սկսում են հոգ տանել նրանց մարմնի մերկութիւնը ծածկելու մասին: Ես հակառակ չեմ այս միջոցի սկզբունքային նշանակութեանը: Սակայն հարցը նրանումն է, թէ նա ինչպէս է գործադրւում: «Շուտ ծածկելի, չիս ամաչում, անամօթ» և նմանօրինակ խրատները կարկուտի նման թափւում են անմեղ երեխայի գլխին, որ այս միջոցից այն տպաւորութիւնն է ստանում, թէ մի արտասովոր բան է ծածկւած այս խրատների տակ:

Որ երեխան մտածի մի որևէ անհասկանալի բանի մասին, ոչ թէ կարելի է հշտութեամբ խանգարել, այլ ընդհակառակը՝ հէնց անհասկանալին է, որ մանրակրկիտ վերլուծման է ենթարկւում: Երեխան սակայն չի հասկանայ այն, թէ ինչու մարմնի որոշ մասերի պատահական մերկութիւնը մի յանցաւոր և մի

ամօթաբեր բան է համարուած: Երեխան չի կարող էլ այդ հասկանալ, քանի որ հասակաւորները իրենք անկարող են լինում պատասխանել երեխայի «ինչու»-ին մի օրինաւոր «որովհետեւ»-ով, այսինքն՝ չեն կարողանում այդ առթիւ բաւարար բացատրութիւն տալ: Երբեք էլ հայրը կամ մայրը երեխայի այդպիսի հարցից այնքան զայրանում են, որ քիչ է մնում նրանց ծեծեն, կարծես մի զարհուրելի բան է կատարել: Դրանով ոչ միայն հիմք է դրւում կարծելու, թէ բնութեան ստեղծած մի առարկան անպէտք ու ամօթաբեր է, այլ և առիթ է տրւում խորհրդաւոր ու գրաւիչ այդ գաղտնիքը ուսումնասիրութեան նիւթ դարձնելու: Եւ այդպիսի առիթներ գրեթէ իւրաքանչիւր օր երեխայի առաջ են:

Նախ և առաջ ծառաները, որ «կատակով», կամ երեխաներին կարծեցեալ բաւականութիւն պատճառելու համար, կամ թէ չէ շնորհիւ իրենց վաւաշտութեան, կեղտոտ խօսքերի ու շօշափումների միջոցով երեխայի ուշադրութիւնն են դարձնում մարմնի այն մասերի վրա, որոնք ծնողների կողմից ներկայացւում են որպէս ամօթալի և մեղսալից բաներ:

Այսպիսով մի կողմից՝ ծառաների այդ ձևի վերաբերմունքը, իսկ միւս կողմից՝ ծնողների ծածկամտութիւնը բաց են անում գաղտնիքը, որ ծնողների խնդրանքի շնորհիւ ներկայանում է որպէս ամօթաբեր և մեղսալից բան:

Այժմ երեխաները գիտեն արդէն մի բան, որ նրանց մտածողութիւնն ու հետաքրքրութիւնը ա-

ւելի ևս կենտրոնացնում է խորհրդաւոր առարկայի շուրջը: Դպրոցական կեանքի եթէ ոչ առաջին տարիներում, յամենայն դէպս դեռ տարրական դպրոց այցելելու ժամանակաշրջանում երեխաների՝ կեղծ հիմքերի վրա դրած աշխարհայեցողութիւնը, ընկերները «փորձառութեան» և սեփական դիտողութեանց շնորհիւ, առաւել ևս հասակաւորների անվայել խօսակցութիւնների ու բացականչութիւնների ազդեցութեան տակ, մտածողութեան այնպիսի նիւթեր է ստանում, որ մարդ արդէն նրանց փշացած բարոյականութեան և վաւաշտութեան մասին կարող է խօսել:

Ապա ի՞նչ է պատահում, երբ երեխան փողոցում տեսնում է շներին մի վիճակում, որի նպատակն է սերունդ առաջ բերելը: Ներկայ դաստիարակչական յարաբերութիւնների շնորհիւ երեխան իր տեսածը համարում է ոչ թէ բնական աճման մի ձգտում, այլ մի խայտառակութիւն, մի յանցանք և հայրիկի ու մայրիկի օրինակին հետեւելով՝ աշխատում է ոտի հարւածներով բաժանել շներին: Թէ դրանով որպիսի կոպտութիւն է զարգանում երեխայի մէջ, — այդ մասին ինքը երեխան անկարող է գատել կամ պատասխանաւոր ուղաւորել: Եւ այդ կոպտութիւնը, գոհակութիւնը երեխայի մէջ զարգանում է այնպիսի հասակում, երբ նա ծնկաչոք պիտի խոնարհւի բնութեան ուժի առաջ և աստուածային մի սրբութիւն համարի նրա գործադրութիւնը:

Ի՞նչ է լինելու այնուհետեւ այդ բոլորի հետեւանքը: Մօր փորը մեծանում է: Երեխաների ներկայութեամբ

յղութեան մասին խօսել չի կարելի. վայ նրան, ով այդպիսի «անխոհեմութիւն» կանի: Բայց երեսման հետաքրքրուում է, նա ուզում է իմանալ, թէ ինչու է մօր փորը ուռած, և ահա գալիս են ծառաների ու այլ կողմնակի մարդկանց բացատրութիւններն ու ակնարկները և երեսայական դիւրադգաց հոգու առջև կամաց-կամաց բաց անում ճշմարտութիւնը: Բայց այդ ճշմարտութեան արմատը բացում է քաղցր խաբէութեան և խարդախութեան մշուշով շրջապատւած: Անգիտակից երեսման ճաշակում է այդ քաղցրութիւնը և աւելի ևս հակում դէպի լիտիութիւնը: Չէ որ հէնց ծնողներն իրենք սովորեցրել են, որ այդպիսի նիւթերի մասին խօսելը մի յանցանք ու ամօթալի բան է:

— Ուրեմն մայրիկն էլ ե ենք արեւել այդ խայտառակ վիճակին, հնա՞:

Ես կարծում եմ, որ հէնց միայն այս հանգամանքը բաւական է, որպէսզի հասունանայ այն պահանջը, թէ երեսային հարկաւոր է բացատրել մարդու ծագումը:

Այն ամենը, ինչ վերաբերում է սեռական յարաբերութիւններին, մեզ համար դարձել է մի ամօթաբեր հասկացողութիւն, իսկ այս վերջինը երկրորդ բնութեան չափ արմատացած լինելով մեր մէջ՝ արգելք է հանդիսանում ցանկալի բացատրութիւնները տալու երեսայի «ինչու» հարցին, նոյն իսկ այն դէպքում, երբ այդ ցանկանում ենք: Յամենայն դէպս աւելի քան դարմանալի է, որ կրթւած մարդկութիւնը, այնքան խոր ու իմաստուն վարդապետութիւններ հաստատող

նշանաւոր մանկավարժներ ունենալով, մինչև օրս չէ կարողացել բաց անել մի ճանապարհ: Երով հնարաւոր լինէր քար ու քարդ անել խաւարի կործանիչ պատնէշները և ամեն կողմ սփռել ճշմարտութեան ու գիտութեան կենդանարար լոյսը, մի ճանապարհ, որ աջ ու ձախ ոչնչացնէր ինքնախաբէութեան ու նախապաշարմունքների ֆեասակար զօրութիւնը:

Բայց կայ ճանապարհ, որով հնարաւոր է դպրոցական երեսմաներին մարդու ծագումը իսկական իմաստով բացատրել, առանց նրա ամօթխածութեանը որ և է ֆեաս հասցնելով, այլ ընդհակառակը՝ այդ ամօթխածութիւնը աւելի մաքուր ու բնական ձևով կրթելով և մարդու ծագման մասին ունեցած կեղտոտ հասկացողութիւնն անհնարին դարձնելով:

Օրինակի համար, վերցնենք վերոյիշեալ դէպքը, երբ ծնողները եռանդուն միջոցներ են ձեռք առնում մարմնի բաց մասերը ծածկելու համար: Ահա փոքրիկ երեսման, մանաւանդ մի աղջիկ, նստած է ոտները ծալած, և բաց է նրա մարմնի ներքին մասը: Փոխանակ անմեղ երեսայի գլխին յանդիմանութեան ու խրատների հեղեղ թափելու ամօթխածութեան ու զղւանքի մասին, աւելի լաւ կը լինէր, եթէ ծնողները մօտաւորապէս այսպէս ասէին:

— Իմ աչքի լոյս, շորերդ ցած քաշիր, ապա թէ ոչ կարող ես հեշտութեամբ մտնել և, այն ժամանակ դու կը հիւանդանաս ու կը տանջուես:

Սա արդէն երեսային անպայման աւելի ճշմարտ կը թւայ, քան թէ բոլորովին անբացատրելի, փաթա-

թովի ամօթխածութեան զգացմունքը մարմնի որոշ մասը ունենայու համար, մանաւանդ որ մարմնի այդ մասից «ուրիշներն» էլ ունեն:

Բայց տեսնենք թէ յետոյ ինչ է ընկնում կշեռքի վրա. — երեխան այդ հոգատար խրատների աղբեցութեամբ առաջինը՝ ոչ մի անգամ չի մտածի թէ ինչու մարմնի որոշ մասը բաց չը պէտք է լինի, և երկրորդը՝ երբէք ուշադիր չի դառնայ դէպի իր մարմնի առանձնապէս այս կամ այն մասի պահպանութիւնն ու հոգատարութիւնը: Նրա աչքում մարմնի ստորին մասը նոյնքան կարևոր և նոյնքան ազնիւ կը համարւի, որքան և պարանոցը, ականջը, փորը և այլն և այլն:

Ինչպէս որ դժւար թէ մի մտածող մարդ ճարւի, որ փորձ արած չը լինի աշխարհի կամ դաւանական Աստուածութեան ծագման բացատրութիւնը գտնել, այնպէս էլ հազիւ թէ մի երեխայ ճարւի, որ ընականօրէն ցանկութիւն չունենայ հարցնելու, թէ որտեղից է իսկապէս երեխան աշխարհ գալիս:

Ժամանակակից հասարակական հասկացողութիւններին նայելով այս հարցը շփոթութեան մէջ է գցում պատասխանողին: Ինչպէս կարող է նա չը շփոթւել, եթէ մարդ այս հարցին պատասխանելու համար մտածում է ոչ թէ ստութեան, այլ իսկական ու ճշմարիտ պատասխանի մասին:

Այսպիսի դէպքում ինքս հիմնաւոր կը համարեմ մի այնպիսի շփոթութիւն որ առաջ է եկած ոչ թէ փափկանկատութիւնից, այլ այն հոգատարութիւնից, թէ ինչպէս անենք, որ մեր տւած բացատրութիւնը հա-

մապատասխան լինի երեխայի մտաւոր ընդունակութիւններին և ունեցած տեղեկութիւններին: Սովորաբար երբ մի որ և է տան մէջ նորածին երեխայ է լինում, շրջապատող երեխաներին տարբեր բացատրութիւններ են տալիս:

Այդպիսի դէպքում ես օրինակ՝ մօտ 6 տարեկան երեխային մի այսպիսի պարզ պատասխանը կը տայի. «Իւրաքանչիւր մայր ծնում է իր երեխաներին»:

Իհարկէ այս պատասխանը կարող է երեխային բաւարարութիւն չը տալ, և նա կարող է անկասկած էլի հարց ու փորձ անել, թէ մայրը ինչպէս է այդ անում: Այն ժամանակ պէտք է ասել. «Եւր, մայրիկը մի քիչ արիւն և մի քիչ էլ միս է տալիս իրանից, բայց այնպէս, որ նա իր մարմնից չի դուրս կտրում, այլ տալիս է իր մէջ, և նրա մարմնի մէջ մեծանում է այդ միսը, կենդանանում է և երբ բաւականաչափ մեծանում է և երեխայ է դառնում, մայրիկը նրան դուրս է հանում, և որովհետեւ նա դեռ չի կարողանում ուտել, ուստի մայրիկը նրան կաթ է տալիս: Դու ինքդ, սիրելիս, մի այդպիսի մանկիկ էիր և քո մայրիկի կտորն ես կադմում: Իհարկէ մայրիկը ցաւ է զգում, երբ մի այդպիսի կտոր միս և արիւն է տալիս իրենից, և դրա համար էլ նա հիւանդանում է: Բայց նա հաճութեամբ տանսւմ է այդ ցաւերը, որովհետեւ սիրում է իր երեխաներին, և դաք պէտք է մայրիկին շատ սիրէք, որովհետեւ դուք իսկապէս նրա մօից ու արիւնից էք: Դու մայրիկին չը պիտի նեղացնես և պէտք է խելօք ու հնազանդ լինես, որովհետեւ դու միշտ պէտք է շնորհակալ լինես,

որ նա այնքան ցաւեր է կրել բեղ ունենալու համար»։

Այս տեսակ բացատրութեան ժամանակ ոչ ողջախոհութիւնը կը ֆլասուի և ոչ էլ վաւաշոտութիւնը կը գրուի։

Անդհակառակը, մեծ չափով բարոյականութիւն, կարեկցութիւն և ջերմեւանդութիւն կը սերմանալի երեխայի մատաղ հոգու մէջ, որ դրա շնորհիւ աւելի լաւ պաշտպանւած կը լինի դպրոցի և փողոցի հասարակութեան վտանգաւոր ազդեցութիւնից։ Այժմ արդէն կարելի է գործածել այն դաստիարակչական ձևը, որ առաջարկուած է Մարիա Լիշնևսկայան։

Մարդու ծուգման և զարգացման պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մասնիկ բնութեան ուժերի զարգացման։ Պարզ է ուրեմն, որ բնական պատմութիւնը ամենայնաւոր միջոցն է պատշաճ դէպքերում այդ իրողութիւնը պարզարանելու համար։

Նախ և առաջ պէտք է վերցնել բոյսերը և ցոյց տալ թէ նրանց մէջ գոյութիւն ունի երկու սեռիգական, որը պարունակում է ձւարան, և արական, — որը սերմ է պարունակում, և թէ այդ սերմը բեղմնաւորում է իգական սեռի ձւարանը, այսինքն՝ այդ սերմի շնորհիւ ձւարանը ուժ է ստանում սնունդ առնելու, ժամանակով զարգանալու և մի հասունացած պտուղ դառնալու։ Այնուհետև պէտք է ասել որ մի էգ բոյս չի կարող իր ծաղիկների ձւարանները զարգացնել և պղտուղ դարձնել, եթէ ձւարանները չը բեղմնաւորւեն արու բոյսերի սերմով և այդպիսով ձեռք չը բերեն այդ բնականութիւնը։ Նոյնպէս պէտք է բացատրել

որ արու բոյսերը չեն կարող պտուղ ունենալ, որովհետև թէև ունեն բեղմնաւորման համար անհրաժեշտ սերմը, բայց չունեն պտուղ դարձող ձւարան։

Բնական պատմութեան յաջորդ դասերին պէտք է խօսել ձկների մասին և բացատրել, որ ձկան ձերքը, այսինքն՝ ձկնկիթը մի այնպիսի նիւթ է, որ համապատասխանում է բոյսերի ձւարանին և որ միայն էգ ձուկն է իր մէջ պարունակում, իսկ արու ձուկը դրա փոխարէն իր մէջ պարունակում է մի այլ նիւթ, այսպէս անւանւած կաթը։

Դրանից յետոյ պէտք է բացատրել թէ ինչպէս էգ ձուկը գետերի ափին ձկնկիթ է ածում, իսկ արու ձուկը դրա վրա իր կաթն է թափում, որով և ձկնկիթը բեղմնաւորւում է։ Այս արեգակի տաքութիւնը կատարում է իր գործը, և բեղմնաւորւած ձկնկիթից վերջի վերջոյ դուրս են գալիս փոքրիկ ձկնիկներ։

Այդ չափով նախապատրաստելուց յետոյ կարելի է հաւի ժարմնակազմութեանը անցնել։ Երեխային ցոյց են տալիս կտրատած մի հաւ և նրա ձւարանը նկարագրում ու բացատրում են ճիշտ նոյն ձևով, ինչպէս և սիրտը, փայծաղը, մաղձը և այլն։ Այդ դէպքում պէտք է մատնանիշ անել, որ հաւի ձւարանը բաղկացած է բազմաթիւ ձերքից, որ նա շարունակ բաց է թողնում մի ձու, որ դեռ հաւի մէջ գտնւած ժամանակ բեղմնաւորւում է արու հաւի, այսինքն՝ արաղաղի սերմի միջոցով, երբ վերջինս իր սերմով թրջում է ձուն։ Այդպիսով ձուն բեղմնաւորւելուց յետոյ ծածկւում է մի պինդ կեղևով, որպէսզի անփաս կերպով հաւի մարմնի

1740 54

1740 54



միջից դուրս գալ կարողանայ:

Դասատուութեան յետագայ ժամերին կարելի է անցնել կաթնասուն կենդանիների նկարագրութեանը և ուշադրութիւն դարձնել ծննդաբերութեան պատճառած ցաւերի վրա, որոնք այնքան վտանգաւոր են ծրնող մօր կեանքի համար:

Այս բոլորը այսկերպ բացատրելով կարելի է փոքրիկ երեխայի գիտութեան ծարաւին աւելի հետաքրքրական և իրական կերպով գոհացում տալ, և նա բեղմնաւորման, հետևապէս և սեռական գործողութիւնների մասին մաքուր հասկացողութիւն կունենայ, առանց նախապաշարմունքների ու կեղտոտ մտքերի:

Երեխաները դրանով մի նոր ապացոյց կը ստանան կին արարածի կոչման մասին և կը հասկանան թէ բեղմնաւորման ու աճման համար անհրաժեշտ է արական սերմի ազդեցութիւնը: Այլ ևս ճնշման ու սեռական ամօթանքի ոչ մի նշոյլ, կոպիտ ու կեղծ ըզգացմունքի ոչ մի հետք չի պատշատուի նրանց. այդ ձևով նախապտորաստած լինելով՝ նրանք աստուածային բնութեան երեւոյթների մէջ լկտի վաւաշտութիւն չեն նշմարի: Եւ յղիացած մօրը տեսնելով ճշմարիտ ակնածանքի մի զգացմունք, մտերմութիւն և և սէր կը ծագի երեխայի մէջ դէպի մայրը, իսկ այս յարգանքի և ակնածանքի զգացմունքը աղջկայ սիրտը, շնորհիւ իր ապագայ մայրական կոչման գիտակցութեան, հպարտութեամբ կը լցնի: Աղջիկը մի որևէ ճնշող և ամօթալի անհամեստութիւն չի տեսնի այն բանի մէջ, ինչ որ ամեն օր և ամեն տեղ կատարւում է

և ինչ որ իր մօրն էլ է պատահել:

Բնագիտութեան դասատուութեան այդպիսի եղանակի մէջ ոչ սեռական անդամներն են որ և է դեր խաղում, ոչ էլ վաւաշտութիւնն է որ և է կերպ զըզուում, ոչ էլ հեշտանքի վրա է մասնացոյց արւում:

Իմ կարծիքով, սեռական անդամների անունները չը պիտի տալ, որովհետև դա բոլորովին աւելորդ է. երեխային պէտք է բացատրել ոչ թէ սեռական գործողութիւնը, այլ մարդու ծագումը: Այսքան էլ բաւական է, եթէ երեխան իմանայ, որ ձուն բեղմնաւորւում է արական սերմի միջոցով: Երեխան, ենթադրենք, ցանկանում է աւելի ու աւելի բան իմանալ, դարձեալ կախած է հանգամանքներից ու խօսակցութեան պայմաններից, թէ երեխային այլ ևս մինչև որ աստիճան կարելի է բացատրել: Ոչ մի դէպքում խուսափողական պատասխաններին չը պիտի խորհրդաւոր կերպարանք տալ, առաւել ևս բնական մի որևէ հարց չը պիտի ցոյց տրւի որպէս խայտառակ, ամօթալի, մեղսալից և այլն հարց: Երեխան հարցնում է ոչ թէ անբարոյական ցանկութիւնից դրդւած, այլ գիտենալու ցանկութիւնից:

Բացատրութիւններ տալու համար չը պիտի սպասել մինչև չափահաս դառնալը, մանաւանդ աղջիկներին վերաբերմամբ, որոնց հէնց վաղաժամ բացատրութիւններ տալ անհրաժեշտ է: Յամենայն դէպս չափահասութեան սկզբում թէ տղաներին և թէ աղջիկներին աւելի մանրամասն բացատրութիւններ պէտք է տալ, սակայն նոյնպէս աչքի առաջ ունենալով համապա-

տասխան անհատական պայմանները:

Ամենայն օր մենք լսում ենք—իսկ մենք լսում ենք կատարածի միայն մի չնչին—մասը, փոքրիկ աղջիկների բոնարարումների մասին:

Եթէ զոհերի մի մասը նոյնիսկ, շնորհիւ ակամայից ձեռք բերած տեղեկութիւնների, հասկանում է, որ իր խաղացած «խաղը» մի արգելւած է մեղսալից բան է, այնուամենայնիւ նրա համար դեռ պարզ չէ, թէ ինչ ծանր հետեանքներ ունի այդ «արգելւած պտուղը», ինչ դառն վիճակ կարող է նա առաջացնել: Երբ խեղճ զոհերը այդ հասկանում են — արդէն ուշ է լինում:

Ես չեմ ուզում ասել, թէ մատաղ սերնդի մեր ուղած դատարարականութիւնը սափրիչի սուր դանակի նման մարդու միջից կը կտրի, արմատախիլ կանի չարիքը, թէ այդ բոլորի շնորհիւ միանգամայն անպէտք կը դառնան օրէնսգրքի մէջ եղած յօդածները բարոյականութեան վերաբերեալ: Պարզ է, իհարկէ, որ դժբանից յետոյ էլ այդ վայրենի ղեպքերը տեղի կունենան, բայց աւելի ու աւելի սակաւ չափերով, ճիշտ այնպէս, ինչպէս որ բժշկութեան և առողջապահութեան առաջադիմական քայլերը նւազեցնում են որոշ հիւանդութիւնների կրկնութիւնը:

Այդ ղեպքում գուցէ կարիք չի լինի որ ծնողներից խլենք 12 տարեկան աղջիկների դատարարականութիւնը, պատճառ բերելով այն իրողութիւնը, թէ ծնողները թէև բացատրել և արծարծել են արել երեխաներին կուսական ամօթանքը, բայց և այնպէս չեն կա-

րողացել ակամայից զարգացող «յանցանքի» առաջն առնել: Դեռ 1905 թ. դարնանը Բերլինում պատահած ղեպքերն աչքի առաջ ունենալով ոմանք գրում էին. «այլևս անկարելի է ծնողական այդ ձևի հսկողութեան տակ թողնել մատաղ ու փափկասուն երեխաներին»: Սակայն եթէ կանոնաւոր հիմքերի վրա դրել դատարարականութիւնը, այլևս կարիք չի լինի այդպիսի կոչերի:

Նոյնպէս մատաղ սերնդի այստեսակ կրթութեան արդիւնքը կը լինի այն իրողութիւնը, որ մեղանում 13 տարեկան մայրերի թիւը կը պակասի, զգալի չափերով կը պակասի և անառակութիւնը: Երբ մարդ այդպիսի շրջաններում հարց է տալիս, թէ ի՞նչն էր պատճառ այդ վիճակի մէջ ընկնելուն, զրեթէ բոլորը միակերպ պատասխանում են. — «խաբւեցի. անխ, եթէ ես այն ժամանակ իմանայի... ես այնպէս յիմար էի և այլն»:

Դրա հետ միասին մարդ մի բան էլ պիտի մտածի. — իւրաքանչիւր երեխայ հնարաւորութիւն ունի մերթ այստեղ, մերթ այնտեղ մի որ և է բան լսելու սեռական յարաբերութիւնների մասին: Եթէ երեխան նախապատրաստւած է, այն ժամանակ սեռական յարաբերութիւնները կը համարի աճման մի մարդու ու բնական սիստեմ: Իսկ եթէ երեխայի հարցասիրութեան ու գիտութեան ծարաւը ամօթխածութեան և «յանցանքի» քօղով ենք ծածկել, այն ժամանակ նրա երկակայութիւնը բազմազան խաբէութեանց և կեղծիքի ազդեցութեան ներքոյ այդ յարաբերութիւնները կը պատկերացնի բոլորովին այլ գոյնով: Հին քանդակագործական թանգարաններում և պատկերների գալերէաներում

պատանին կամ աղջիկը արեւատագէտի հմուտ ձեռքով պատկերացրած են լինում ամբողջ գրաւչութեամբ ու գեղեցկութեամբ, կանացի մարմնի ամբողջ հմայքով: Եւ այդ տեսարանները երեխան դիտելիս պէտք է համարի ոչ թէ ամօթալի մերկութիւն ու վատ մտքեր յարուցանող պատկերներ, այլ բնական մի բան:

Գողութիւնը մի այնպիսի գործողութիւն է, որից բարոյապէս կրթւած մարդը երկիւղով խուսափում է, որովհետեւ նրա մէջ դաստիարակութեան շնորհիւ արմատացած է այն հասկացողութիւնը, թէ անիրաւացի և վատ բան է ուրիշի սեփականութեանը տիրանալը: Բայց եթէ մարդ մանուկ հասակից այնպիսի գաղափար կազմի, թէ երկրի բոլոր բարիքները ամբողջ մարդկութեանն են պատկանում, թէ ամենք, աշխատող և չաշխատող, հաւասար իրաւունք ունեն վերցնելու երկրի վրա գոյութիւն ունեցող առարկաներից ինչքան որ հարկաւոր է, այդ դէպքում գողութեան, անիրաւացի սեփականութեան գաղափարը նոյնքան հասկանալի կը լինի, որքան և լողութիւնը մարմնի կամ քթի միջոցով: Ծիշտ այդ ձևով էլ երեխան չի կարող կեղտոտ ու ամօթալի բանի մասին մտածել, եթէ նրան սովորեցրել են մաքրութիւնն ու ճշմարտութիւնը սիրել:

Շատերը պնդում են, թէ սեռական յարաբերութիւնները երեխաներին բացատրելով ֆուսուում է ողջախոհութիւնը, այն ինչ այդ ողջախոհութիւնը պէտք է լինի: Այո, պէտք է լինի: Բայց նա երբէք արգելք չը պիտի դառնայ անմիտ դաստիարակութեան և սխալ հասկացողութիւնների բացասութեան: Նրա պատճա-

ռով չի կարելի թողնել, որ երեխան բնական երեւոյթը ամօթանք ու յանցանք համարի:

Արդեօք ողջախոհութիւն կարելի է համարել, երբ մի կին այնքան «ողջախոհ» է, որ ամուսնութեան առաջին գիշերը իր ամուսնու գրկից փախչում է և մի ուրիշ սենեակի անկիւնում պատսպարւում, որպէսզի ազատւի այն ամօթանքից, որ պատճառել է ամուսնու պահանջը:

Արդեօք ողջախոհութիւն է, երբ մի կին ամուսնութեան առաջին գիշերը մի ցաւազար երկիւղի զգացմունքից զրդւած՝ ուրիշներին օգնութեան է կանչում, կարծելով թէ ամուսինն ուզում է իրեն սպանել:

Այդ երկու դէպքերն էլ լաւ յայտնի են ինձ: Երկու դէպքում էլ անջնջելի ատելութիւն ծագեց տղամարդ ամուսինների «անամօթութիւնից»: Առաջին տիկինը ամուսնութիւնից մի տարի չանցած մեռաւ սրտի հիւանդութիւնից, իսկ երկրորդը դառն յանդիմանութիւններ էր կարգում մօրը, թէ ինչու իրեն չէր բացատրել այն, ինչ որ պէտք է պատահէր:

Ես կարծում եմ որ ամուսնութիւնը անհրաժեշտ է, և միշտ այդ կարծիքին էլ կը մնամ: Բայց միայն ամուսնութիւնը չէ, որ մէկին իրաւունք է տալիս ուրիշի մարմնին տէր դառնալու: Այն բոլոր մարդիկ, որոնք չամուսնացած անհատներից (այստեղ խօսքը գլխաւորապէս իգական սեռի անհատների մասին է) ծածկում են ամեն բան, ինչը կապ ունի սեռական յարաբերութիւնների հետ, ամուսնութեան համար իբր թէ պահպանակ ամօթխածութեան քօղն են հիւսում:

Ընդհակառակը կասեմ, այդպիսի վերաբերմունքը հասարակական կարգն ու բարոյականութիւնն խանգարում դասապարտելի մի բան է:

Այն ինչ այդ բոլոր երևոյթները կարող են վերացել, եթէ մատաղ սերնդին խելացի բացատրութիւն տրւի սեռական յարաբերութիւնների մասին, եթէ վաւաշտութեան փոխարէն արծարծւի մաքուր ու բնական հասկացողութիւն:

Դրանով կը վերացւի միայն փառակար վաւաշտութիւնը, իսկ սեռական պահանջը ոչ կը վերացւի, ոչ էլ ցանկալի է որ վերացւի: Ընդհակառակը՝ սեռական այդ գագաթունք, ըամեն մի կեղծիքից ու չարիքից ազատ, իր բարարութիւնը կը ստանայ այնտեղ, որտեղ որ երկու հոգիների անկեղծ, երջանիկ սէր ու միաւորում կայ:

Շատերը անհրաժեշտ են համարում քողարկել և նոյնիսկ երկիւղի ազդեցութեամբ զսպել տալ սեռական պահանջին ինքնաբերաբար բաւարարութիւն տալու այնքան յաճախ առաջացող ցանկութիւնը: Բայց ես կարծում եմ, որ այդպիսի ձևով, երկիւղի և սպառնալիքի միջոցով յամենայն դէպս չարիքը չի նւազի, այլ ընդհակառակը՝ աւելի յաճախ կը կրկնւի:

Որովհետեւ այդ ձևով երեխան ոչ կը դադարի ուշադրութիւն դարձնել այն առարկային, որի մասին ուզում է տեղականաւ և համոզմունք կազմել, ոչ էլ սաստիկ կը սարսափի ուժի ու ամօթանքի ազդեցութիւնից: Միթէ այդ ձևի «բացատրութիւնը», որը գրաւիչ սեռական անդամները պատկերացնում է ոչ իբրեւ

ծննդաբերութեան անդամներ, կարող է աւելի մաքուր և՛ բարոյական տեսակետից, աւելի պարզ և բնական համարել, քան ձկան, հաւի, հորթի ծագման բացատրութիւնը:

Ով այդ հարցին «այո» կը պատասխանի, նա մարդկային բանականութեան հակառակ կը գնայ:

Հէնց այդ պատճառով մի կողմ պէտք է թողնել լաւ համարած, բայց վատ իրականացրած դաստիարակութեան հնացած սկզբունքները:

Ամենից առաջ մայրերին եմ ուղղում այս տողերը: Կրթեցէք, զարգացրէք ձեր երեխաներին, որպէսզի կողմնակի մարդիկ ինքնակոչ կերպով այդ չանեն: Խնդրեցէք ձեր զաւակների ուսուցիչներին ու վարժուհիներին, որպէսզի իրենց փորձառութեամբ և մանկավարժական գիտութեամբ պաշտպանեն ձեր այս ձեռնարկութիւնը: Կազմակերպեցէք ծնողական ժողովներ, որտեղ ծնողները, ուսուցիչները, վարժուհիներն ու բժիշկները միասին հաւաքւած կարողանան խորհրդակցել և միջոցներ մշակել իրենց սաների բարօրութեան համար: Ոչ բոլոր մայրերը մանկավարժական ընդունակութիւն ունեն իրենց զաւակներին նպատակայարմար ձևով կրթելու: Ո՛չ բոլոր մայրերն և ուսուցիչները դրա համար անհրաժեշտ անատոմիական գիտութիւնն ունեն: Ձեր տղաները, աղջիկները պէտք է պարզ և լիակատար գազափար կազմեն, թէ որքան նշանակալից է արքունքի հասնելը կամ մարմնի մի այլ փոփոխութիւնը, որպէսզի իրենց մարմինը պահեն առողջ, իրենց հոգին ու միտքը՝ մաքուր:

Անմիջապէս մեզ յաջորդող սերունդը չի լինի, որ մեր աշխատանքի պտուղները պիտի ճաշակի: Մենք հիմք ենք դնում մի այնպիսի շինւածքի, որ աւելի բարձր ու պինդ է լինելու քան Բաբելոնի աշտարակը, — մի շինւածքի, որ հասնում է աստուածային մաքրութեան երկնքին:

Թարգմ. տ. Հր. Թովհեանի

ԾԱՆՕԹԱՅԻՔ ԿԵԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՀԵՏ

ՏԻՆ. ՍԵԼՄԵՐ

Ամեն մի պատիկ էակի աշխարհ գալը, — լինի դա կատի ձագ, լակոտ, հորթ թէ մանուկ, — երեխաները առհասարակ ողջունում են մաքուր, անմեղ հրճանքով, մի տեսակ ակնածութեամբ: Մանկական հոգին անգիտակցօրէն, անորոշ գծերով արտացոլացնում է իր մէջ բնութեան վեհ խորհուրդը, որը բոլոր էակներին իրար հետ է շաղկապում և մեզ դարձնում է միայն մի օղակ գոյութեան միակ, վսեմ և տնհուն շղթայի մէջ:

Ի հարկէ, երեխան պարզ չէ հասկանում այդ կապակցութիւնը, բայց նախազգում է այդ կապակցութիւնը, հէնց որ նրա մէջ արթնանում են գիտակցութիւն և դատողութիւնը: Այդ նախազգացումը արտայայտում է քնքուշ, մեղմ ամօթախժութեամբ, ինչպէս որ սովորաբար բոլոր մաքուր, չը փչացած երեխաներն արտայայտում են իրենց ժողովրդի ու զգացմունքները իրենց լիակատար վստահութիւնը զրաւած հասակաւորների առջև:

Միայն նրբ հասակաւորները պղտորած են լինում մանկական հոգին իրենց կոպտութեամբ, թեթևամտութեամբ, կեղծաւորութեամբ, այդ նախազգացումը ան-

հետանում է, և այն ժամանակ դժուարութիւններ են առաջ գալիս երեխայի հոգին բարոյական մաքրութեան մէջ կրթելու համար:

Իմ կարծիքով, երկու պատճառ կայ, որ ծնողներին և դաստիարակներին շատերը, նպատակ ունենալով բարոյապէս կրթել սանիկին, հանդիպում են ամենա մեծ դժուարութիւնների:

Մէկն անէ, որ ծնողների և զաւակների մէջ դժբախտաբար պակասում է փոխադարձ վստահութիւն, և երկրորդն այն, որ պապերին հնուց ժառանգաբար անցել է մեղ մի ֆնասակար սովորութիւն բազմանալու եղանակը գաղտնապահութեամբ վարագործելու: Աստուած մի արասցէ որ երեխաները մի բան իմանան դրա մասին:

Ինձ թւում է որ մենք պարտական ենք բացատրել նրանց, ում որ կեանք ենք պարգեւել, թէ ի՞նչ պայմանների շնորհիւ են նրանք այդ կեանքը ստացել:

Մենք պարտական ենք օգնել նրանց որ տէր դառնան իրենց մէջ եղած, բնական ուժի, որ ընդունակ դառնան յազթանակելու կեանքի մէջ պատահելիք թէ ներքին և թէ արտաքին գայթակղութիւններին:

Բայց որպէսզի կարողանանք մեր այդ պարտականութիւնները կատարել, մենք հէնց սկզբին պիտի ընդհանուր կեանքով ապրենք մեր զաւակների հետ, ուշի ուշով հետամուտ լինենք նրանց հոգու բոլոր ելեէջերին, թափանցենք նրանց հոգու գաղտնի խորշերը փոխադարձ լիակատար վստահութեան օգնութեամբ:

Ձեռք բերել երեխայի լիակատար վստահութիւնը յաճախ շատ աւելի դժուար է լինում, քան թէ այդ կարծում են առհասարակ: Դրա համար ծնողները պէտք է ունենան մի առանձին փափկանկատութիւն և մանաւանդ նրբազգաց ներքին ընդունակութիւն, որը նրանց օգնէր ըմբռնել հասկանալ այն բոլոր անորոշ և երբեմն տարօրինակ զգացմունքները, տրամադրութիւնները, որոնք ծագում և խճողում են մանկական հոգու մէջ:

Ինձ միշտ ապշեցրել է այն տխուր իրողութիւնը, թէ որչափ քիչ վստահութիւն և անկեղծութիւն է տիրում ժամանակակից ընտանիքների մէջ:

Ծնողները մեծ մասամբ իրենց ճանապարհով են գնում, զաւակները՝ իրենց, ամեն մէկը ունենալով իր սեփական առանձին շահերը, ուրախութիւնն և վիշտը: Երբեմն կարելի է այնպէս կարծել իբր թէ դրանք տարբեր աշխարհների բնակիչներ են: Ամեն մէկը միայնակ է չարչարում որ փարատեն իր տարակուսանքներն և վարանումները, ոչ մի կամուրջ չի միացնում մէկի հոգին միւսի հոգու հետ:

Վստահութեան և անկեղծութեան կամուրջը ձգել իրենց և իրենց զաւակի հոգու միջև — ահա ծնողների առաջին նպատակը, եթէ միայն նրանք կամենում են տալ իրենց զաւակներին բարոյական դաստիարակութիւն և օգնել, որ հասկանան կեանքի ամենախորհրդաւոր, ամենակարւոր երևոյթը — բազմանալու երևոյթը: Ամեն մէկը, որ մօտիկից գիտի երեխաներին, գիտի թէ որչափ նրանք առհասարակ վախենում են իրենց կեանքի թէ ֆիզիքական և թէ հոգեկան կող-

մերի երևան հանելուց: Նրանք յաճախ գերադասում են իրենց մէջ թաքցնել իրենց վիշտը կամ փոքրիկ անախորժութիւնը, եթէ մայրը չի իմանում աննկատելի կերպով նրանց վստահութիւնը գրաւել և նրանց վիշտը բաժանել, ինչպէս որ այդ պահանջում է մանկական անմիջական զգացմունքը:

Եւ քանի քանի ծնողներ և զաւակներ կան, որոնք առհասարակ քիչ են սովոր իրար հետ հաղորդակցութիւն ունենալու, յաճախ քաշուում են իրար հետ խօսելուց ամենաբնական բաների մասին: Ո՛րքան չարիք է բերում այդպիսի օտարացումը: Ո՛րքան բարի սերմեր են խեղտում մատաղ սերնդի սրտերում միայն նրա համար, որ ժամանակին գուրգուրած չեն եղել, տաքացւած չեն եղել ծնողական մտերմութեան ջերմութեամբ:

Կրկնում եմ, բարոյական կրթութեան առաջին պայմանը զաւակների վստահութիւնը ձեռք բերելն է: Իսկ ամենից աւելի հարկաւոր կը լինի դա այն ժամանակ, երբ հարց կը ծագի մի այնպիսի նուրբ խնդրի մասին, ինչպէսն է բազմաալու խնդիրը:

Եւ ոչ մի բան այնպէս չի նպաստում ծնողների ու զաւակների մերձեցման, չի առաջացնում նրանց մէջ անսահման քնքուշ, մեղմ ու անկեղծ յարաբերութիւններ, որքան ծնողների որտաքուղիս զրոյցները իրենց փոքրերի հետ, եթէ այդ զրոյցները սկսւում են այն հասակից, երբ բնատրուրեան կազմակերպութեան և մտաւոր դարգացման առաջին հիմքերն են դրւում:

Մանուկի մարմինը հէնց առաջին օրւանից մօր

խնամքին է յանձնւած լինում, և նրա հոգին էլ իր մոլոր ցանկութիւններով և իղձերով նախ և առաջ բացւում է հէնց մօր առջև. նա պիտի հետզհետէ լուսաւորի մանուկի դէւրագգաց հոգին ճշմարտութեան լոյսով:

Բայց այդ վստահութիւնը ձեռք բերելու համար անհրաժեշտ է որ ինքներս էլ վստահութեամբ վերաբերենք նրանց: Տալով նրանց մեր վստահութիւնը, տիրանում ենք նրանց վստահութեանը: Երեխան պէտք է տեսնի, զգայ, որ հաւատում ենք թէ նա գիտէ իր զգացմունքներին տիրել, հասկացող էակ է, իր խելքն ունի: Ինչպէս որ ոչ մի ուրիշ բան չէ կարող այնպէս ստորացնել երեխային իր սեփական աչքում, որքան արհամարհական, ծաղրական վերաբերմունք դէպի նա, — այնպէս էլ ոչ մի այլ բան այնպէս չէ բարձրացնում նրան իր գիտակցութեան մէջ և այնպէս չէ ներշնչում հաւատ և վստահութիւն դէպի հայրն ու մայրը, ինչպէս մեր բաց, սիրտ անկեղծ վերաբերմունքը դէպի նա հէնց փոքր հասակից ի վեր:

Մի միջին տարիքի մայր, խոր և նուրբ զգացող մի կին, պիտի ինքը մենակ կրթէր իր տղային: Նա երեխայի համար ոչ միայն մայր էր, այլ և նրա դասեակը և դաստիարակչուհին, մինչև որ նա մեծացաւ և այլևս մօր խնամքի պէտք չուներ: Տղային լողացնելիս երեսը լանալիս, շոր հագցնելիս կամ հոնելիս, առաւօտից մինչև երեկոյ հետը լինելով, կինը հետզհետէ երեխայի լիակատար վստահութիւնը գրաւեց ու նրա ամենամուտերիմ ընկերը դարձաւ: Եւ քանի աւելի էր երեխան մեծանում, այնքան աւելի երկար և լուրջ խօսակցու-

Թիւն էր ունենում մայրը նրա հետ թէ արչափ կարեւոր է ամբողջ կեանքի համար պահել պահպանել գեղեցիկ, ամրակազմ մարմինը, մաքրասէր լինել, հեռու մնալ որեւէ վարակից: Տղան մեծանում էր առողջ թէ մարմնով և թէ հոգով: Դպրոցական տարիներում նա իր ընկերների կողմից այնպիսի յարգանք էր վայելում, որ նրա երեւալուն պէս ամեն կեղտոտ խօսակցութիւն կամ զւարճութիւն իսկոյն դադարում էր: Նա իր ընկերների արթուն խիղճն էր: Ահա թէ ինչ զօրութիւն կարող է ունենալ թէ մարմնով և թէ հոգով ողջախոհ մէկը, գայթակղութիւնների: Հենթարկող մէկ մարդը: Այդ երեխայից դուրս եկաւ և լաւ տղամարդ. բայց նոյնիսկ հասունանալուց յետոյ էլ նա իր համար անպատւարներ չէր համարում հարկաւոր ժամանակ դիմել մօր խորհրդին:

Որպէս զի մատաղ սերունդը բարոյապէս հաստատամիտ, հոգով մաքուր, մարմնով առողջ մեծանայ, անհրաժեշտ է որ երեխաները մաքուր, բնական հասկացողութիւն ունենան բազմանալու եղանակի մասին:

Փորձը ինձ ցոյց է տւել որ տղաները աւելի դժւար են սովորում բոլորովին բացսիրտ վստահութեամբ վերաբերել ծնողներին, քան թէ աղջիկները: Ուղղակի զարմանալու բան է թէ ինչ բարդ զգացմունքներ և խըճճւած մտքեր են ծագում մի որ և է տղայի մէջ: Նա այնպիսի նախանձախնդրութեամբ է ծածկում այդ մտքերն ու զգացմունքները, կարծես վախենալիս լինի

որ և է կերպով դրանց երևան հանելուց:

Նա ահա որչափ կարելի է վաղ պէտք է սկսել հոգ տանել երեխայի լիակատար վստահութիւնը ձեռք բերելու մասին, հէնց այն օրից, երբ նրա մէջ կը զարթնի գիտակցօրէն իրեն վերաբերելու ձգտումը, երբ նա առաջին անգամ կը դիմի ձեզ և կը խնդրի բացատրել այս կամ այն բանը: Պէտք է ամեն կերպ խրախուսէք որ զայ ձեզ մօտ և պարզի իր տարակուսանքներն ու հարցերը, որ ապրէք նրա հետ իրրեւ մի հոգի և մի մարմին, և այն ժամանակ կարող էք համոզւած լինել, որ երեխան ձեզանից խոյս չի տայ և միշտ կը գայ ձեզ մօտ և կասի թէ ինչ է իրեն մաշում: ॥

Նա մանկական հոգու արշալոյսը կը փայլի և ձեզ համար: Այո, զարմանալի բան. երեխայի անկեղծութիւնը, վստահութիւնը կարող է շատ օգնել ձեզ—սովորեցնել ձեզ այն, թէ ինչ պիտի դուք նրան սովորեցնէք: Ոստի, երբէք ետ միք մղիլ երեխային ձեր մօտից, միք ոտիպիլ նրան ձեռնունայն հեռանայ ձեզանից. ոչ մի բան չի կարող աւելի խստասիրտ լինել:

Մի տղայ հարցնում էր մօրը թէ ինչպէս է շունը լակոտներ ունենում: Մայրը տատանում էր և չը գիտէր թէ ինչ պատասխանի, և երեխան իսկոյն ինքը նրան օգնութեան է հասնում բազմանալու եղանակի մասին իր ունեցած միամիտ, իսկ որ մաքուր և բնական հասկացողութեամբ. «Երեւի, նա ինքն է նրանց ածել ինչպէս հաւն է ձու ածում»:

Նա բոլորովին չեմ հերքում լազլագի հէքիաթի նշանակութիւնը (թէ մանուկներին լազլագն է բերում):

Բայց թող դա հէքիաթ էլ մնայ: Իբրեւ հէքիաթ, դա գեղեցիկ է և շատ յարմարուած է 2—3 տարեկան մանուկներին հասկացողութեանը: Բայց աշխատել ներշնչել արդէն մտածող երեխային որ, կանգնած է իր հիւանդ մօր մահճակալի մօտ և տեսնում է նրա կողքին պառկած մի նոր փոքրիկ էակ, թէ այդ էակը եկել է ծինելու յոյզի միջով լազլազի վրա հեծած,—լիակատար անհեթեթութիւն է:

Բաւական է որ երեխան տանից դուրս գնայ, որ լսի թէ այդ սուտ է: Եւ մեծ մասամբ նա կը լսի այնպիսի ձևով, որը կարող է պղտորել նրա մաքուր հասկացողութիւնները: Զարմանալի չէ որ նրա եղբայրակուրթիւնը այս կը լինի: «Հայրիկս ու մայրիկս չեն ուզում ինձ այդ ասել, որովհետեւ այդ վատ է, ամօթ է»:

Այսպիսով նա կը կանգնի այն թեք մակերևոյթի վրա, որով գլորւելով նա շուտով կը կեդտօտի իր մանկական հոգին: Այն ինչ կանոնաւոր մեծացած ոչ մի երեխայ մի վատ, ամօթալի բան չի համարի այն, որ սրտի տակ ման է ածել նրան և աշխարհ է բերել իր հարազատ մայրը: Ընդհակառակը: Եթէ նրան այդ հասկացում են պարզ, բնական ճանապարհով, առանց նրա հոգեկան մաքրութիւնը, մանկական անմեղութիւնը խախտելու, այն ժամանակ նրա հոգին, երբ կը հասկանայ այդ, կը լցւի խորհրդաւոր հրճանքով, ակնաւորութիւնով և դարմանքով, և այդ բոլորն շուտով չի ջնջւի նրա յիշողութիւնից: Միայն երբ երեխայի հոգու մէջ ցանուած են կոպիտ, թեթեամիտ հայեացքի սերմեր, առաջ են գալիս իսկական դժուարութիւններ: Այն ժա-

մանակ չէ որ նախ հարկաւոր է լինում քաղել որոմները,—և քանի աւելի մեծ, աւելի հին են լինում դրանց ծիւրը, այնքան աւելի դժուար է լինում դրանց քաղելը—և յետոյ միայն արդէն նորից ցանել: Երեխայի տրամաբանութիւնը շատ պարզ, նախնական է: Նրա աչքում հարցը ունենում է միայն երկու պատասխան,—կամ այսպէս է, կամ այնպէս: Կամ ամօթալի և վատ բան է երեխայ ստանալը, կամ ամօթալի և վատ չէ: Եւ ինչ կարող է լինել աւելի ողորմելի, քան թէ մի երեխայի դրութիւնը, որին տանջում, մի տեսակ վատ կասկածանքի մէջ է գցում այն հանգամանքը, որ նրա մայրը պառկած է նոր ծնի եղբայրիկը կամ քոյրիկը կողքին:

Մի քանիսն ասում են—չէ որ անկարելի է հիմնովին լուսաբանել այդ հարցը կրթութեան այդ շրջանում: Մի մեծ թիւրիմացութիւն է այդ: Կարելի է լուսաբանել հիմնովին, եթէ միայն անենք այդ քայլ առ քայլ, համաձայն երեխայի հոգու աճելուն և զարգանալուն: Այդ գորոյցները պէտք է տեղի ունենան միշտ համապատասխան սրտաբուրդի լուրջ, ողջամիտ եղանակով, որպէսզի երեխայի հոգու մէջ էլ նոյն լարերը հնչեն: Այն ժամանակ զուր կը լինի անհանգստանալ՝ չը լինի թէ նա երբ և իցէ ձեզ անելանելի դրութեան մէջ դնի որ և է «անյարմար» հարցով: Երեխան ինքն ըստ ինքեան ի բնէ չափազանց նրբանկատ և ողջախոհ է: Նրան միայն հետաքրքրում է այն հարցը թէ ո՞ր-տեղից է աշխարհ եկել իր նոր քոյրիկը կամ եղբայրիկը: Աւելի հեռու նա սկզբում չի գնում: Իսկ երբ նրա

մտածողութիւնը այնքան կը զարգանայ, որ նա իրեն կը հարցնի թէ ինչպէս է կեանքը առաջ գալիս, ինչպէս է կեանքը ծագում, նա ինքն էլ արդէն կը լինի մի այնպիսի հասակում, երբ կարելի կը լինի տալ նրան համապատասխան բացատրութիւններ, և երբ նա ընդունակ կը լինի հասկանալու, առանց աւելորդ խօսքերի թէ մարդիկ ենթարկուած են միևնոյն օրէնքին, որը կայ և ամբողջ ընտելեան մէջ, և թէ ծնողներն ու զաւակները միայն առանձին օղակներ են կազմում գոյութեան մի մեծ, անքակտելի շղթայի:

Վերցնենք մի սովորական ընտանիք: Նրա մէջ աշխարհ է գալիս մի նոր էակ: Դրանից առաջ ամբողջ տան մէջ խաղաղութիւն է ընկնում, բոլոր հասակաւորները յուզւած են և շփոթւած, և երեխաները զգում են որ տեղի է ունենալու մի ինչ որ արտասովոր բան. նրանց խնդրում են որ աւելի կամաց ման գան, կամաց խօսեն, որովհետեւ «մայրիկը հիւանդ է»: Այո, այդ միջոցին մայրը տանջւում չարչարւում է, որ նոր յաղթութիւն պարգևի կեանքին: Բոլորն էլ բնազդմամբ զգում են որ մի ինչ որ վեհ բան է տեղի ունենում: Աշխարհ բերել մի նոր մարդ—չէ՞ որ դա ամենամեծ բանն է, որ մարդ կարող է անել իր բնական ուժերով: Ուստի այդ բանի նշանակութիւնը ազաւաղել, մթնեցնել երեխայի աչքում—մեծ մեղք է...:

—Մայրիկ, մայրիկ: Արդեօք մենք էլ չէ՞նք կարող ունենալ նոյնպիսի մի փոքրիկ երեխայ, ինչպիսի ունի մեր լւացարարը:

—Ինչո՞ւ չէ, գուցէ մենք էլ ունենանք—պատասխանում է մայրը: Նա ինչ որ աւելի շուտով է վերջերքս յոգնում և աւելի ծանր է բարձրանում սանդուխտով:

—Իսկ շուտով այդ կը լինի, ինչպէ՞ս ես կարծում, —հարցնում են մանուկները:

Նրանք առհասարակ չեն սիրում սպասել:

—Ինչու էք այդ հարցնում, —ասում է մայրը:

—Դու այժմ այնպէս շուտով ես յոգնում... լաւ չես զգում քեզ... ինչպէս որ այն ժամանակն էր... երբ մեր ժօժօն պիտի աշխարհ գար:

—Այո, ես այժմ մի քիչ յոգնում եմ, —ասում է ժայրը, մի րոպէ աչքերը փակելով, —բայց այդ շուտով կանցնի:

—Մինչև Նոր Տարին, այո՞:

—Գուցէ, կամ մի փոքր ուշ, Զրօրհնէքին, —պատասխանում է մայրը, և արտասուակալած աչքերով նայում է իր «ոսկիներին»:

Ի՞նչքան տանջանք, չարչարանք և հոգս են պատճառել իրեն դրանք. բայց ինքը ամեն ինչ ուրախութեամբ տարել է, եւ ի՞նչ կարող է լինել աւելի լինելու քան թէ նրանց այժմեան փաղաքշանքներն ու հոգատարութիւնը: Մօր սիրտն խորուստ շարժւած է այն գիտակցական հոգատար ուշադրութիւնից, որ նրանք իրեն ցոյց են տալիս հեկեկ ալմ, երբ այնպէս արագ յոգնում է, այժմ, երբ նրանք հասկանում են որ մայրիկի համար ծանր օրեր են սկսւում: Նրանց մէջ արթնացել է պարտաճանաչութեան զգացմունքը, իրենց

պարտականութիւններ զիտակցութիւնը դէպի մայրը:

— Դու մի անհանգստանայ, մայրիկ... Մենք բեզօգն ենք... Ես իմանում եմ փոշի սրբել... Իսկ ես անկողինները կը հաւաքեմ... Ես էլ 'դուրաններ կը կարկատեմ:

Եւ ինչպէս թեթեւանում է մօր սիրտը այս խօսքերից:

Ինձ կասեն «Առաջ չե՛ր կարելի դրա մասին մի բան ինկ այժմ կամենում եմ ասել երեխաներին եւ բաց անել նրանց առաջ կեանքի բոլոր խորհուրդները»:

Բոլորին այդպէս չէ: Հասակաւորները հազիւ թէ առիթ ունենան երկար խօսել երեխաների հետ կեանքի բոլոր խորհուրդների մասին, — այն էլ ասենք արդեօք նրանք իրենք էլ շատ բան գիտենք այդ մասին: Բայց ցրւել խորհուրդաւոր մշուշը, որով քողարկւած երեակայութիւնը ամեն տեսակ սխալ պատկերներ է հիւսում, բոլորովին մեր ձեռքին է, եթէ միայն ուղեւանք ծանօթացնել երեխաներին բնութեան աստուածային օրէնքներին հետ:

Կեանքի մոայլ տակաւնները, խաւար խորքերը տանել ի հարկէ չենք ուզում երեխաներին, և հարկաւոր էլ չէ. — կեանքը ինքը երբ և իցէ կը տանի նրանց այնտեղ ոչ, մեր նպատակն է օգնել նրանց բարձրանալ այն բարձունքի վրա, որտեղից փայլում է մեզ ճշմարտութեան և մաքրութեան լոյսը, ամբողջ օրգանական բնութեան մեծ օրէնքը: Իսկ բարոյական հաստատամտութիւն տւողը ընտանիքի ամբողջ հոգն ու մթնոլորտն է: Այնտեղ է վճռում է թէ արդեօք ապագայ

մարդը մաքուր, բարոյական կեանք կը վարի թէ՞ անփութութեամբ ձեռք կը վերցնի կրքերի դէմ մաքառելուց, — այսինքն՝ իսկապէս ինքն իրենից, իր մարդկային արժանաւորութիւնից: Եթէ հարցը վերջին եղանակով է վճռում, պատճառը յաճախ լինում է հէնց այն, որ երեխային անգիտութեան մէջ էին թողել, նրանից ծածկել էին ճշմարտութիւնը այն ժամանակ, երբ հայրը կամ մայրը, կամ այլ հասակաւոր մէկը պէտք է նրա հետ խօսէր:



190

24

24
49



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ո՞րտեղից է աշխարհ եկել իմ եղբայրիկը—
Գալանդաուէրի 3—26
Ծանօթացրէք կեանքի ծագման հետ—տիկ.
Սելմերի 27—39

ՀՀ Ազգային գրադարան



NL0145661

